

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Դարմնիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի անգլերենի (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ լսարարական ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշաբաթների:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

- 1) հանձնաժողովի անունով գրավոր դիմում, նշելով այն թափուր տեղի անվանումը, որին հավակնում է (Ձև 1),
- 2) Փաստաթուղթ (դիմում)՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
- 3) անձնագրի պատճենը,
- 4) ինքնակենսագրություն (Ձև 4),
- 5) Թափուր տեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
- 6) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,
- 7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը,
- 8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հոկտեմբերի 10-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00 –ից 15:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2018 թ. հոկտեմբերի 12-ին՝ ժամը 14:00-ին, Արարատի մարզի Դարմնիկի միջնակարգ դպրոցում. հասցեն՝ գ. Դարմնիկ, Անդրամիկի 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 99-99-81 հեռախոսահամարով: